Արձանագրություն N 2

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2026/19ՏՀ ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերի բացման և գնահատման հանձնաժողովի նիստի

Մեկնարկ՝ «6» «մայիսի» 2026թ.
Ժամը՝ 12:00
Ավարտ՝ «11» «հունիսի» 2026թ.
Ժամը՝ 16:00

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ '*(ԳՊ/ԳԱՊ)*' Նորիկ Մնոյան

անդամներ՝

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) ՝ Գևորգ Խեչումյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի համակարգող ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) ՝ Հրանտ Մինասյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Նարեկ Հայրապետյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության գլխավոր իրավախորհրդատու (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Լաուրա Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմակերպչական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)՝ Անի Բադալյան

1. Տեղեկատվություն՝ ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2026/19ՏՀ ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 **ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2026/19ՏՀ** ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են **2026 թվականի մայիսի 6-ին ժամը՝ 12:00-ին:**

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ

2 .1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գները /գնվելիք ծառայությունների մատուցման համար գնման հայտով սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը/՝ մեկ թվով արտահայտված.

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	գնվելիք ծառայությունների մատուցման համար գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/
1	Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի, Արա-1 և Արա-2 թաղամասերի փողոցների ասֆալտապատման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ	18 293 190

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և էլեկտրոնային հասցեների հրապարակում

3.1. Հայտեր են ներկայացվել հետևյալ մասնակիցների կողմից՝

N	Մասնակիցների անվանումները	Հասցե /ՀՎՀՀ/	Էլ. փոստ
1	«Սուֆետ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Փիրումյանների 4/3 բն. 11 /07404587/	sufet16@gmail.com
2	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ավան, Սայաթ-Նովա թղմ. 8 /08417251/	info@haldi.am
3	«Արխինէքս» ՍՊԸ	ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Արարատյան փ., 19/1 տուն /01249769/	archineqs@mail.ru
4	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Աճառյան 54բ, /00813453/	lilit.poghosyan@dorproject.am lil.poghosyan17@gmail.com
5	«Սուար» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Բագրատունյաց 15-54 /02290783/	suro4350@gmail.com
6	«ԲԵՍՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ	ՀՀ, ք. Գյումրի, Արագած փ., շ 1, բն.16 /05550458/	bestproject.llc@mail.ru
7	«Ռ Քոնսալթ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն, Տ. Պետրոսյան փ. 48/7 /01027718/	rconsultarm@gmail.com

4. Տեղեկատվություն՝ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

4.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

- **«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊ** ընկերության կողմից ներկայացված հայտում ներառված Լիցենզիայի անբաժանելի մաս կազմող ներդիրը վավերական չէր և հայտով ներկայացված աշխատակազմում ներգրավված մասնագետներից Ռոման Գևորգյանի և Ռաֆայել Հովհաննիսյանի կողմից պայմանագրի կատարմանը մասնակցելու գրավոր համաձայնություններում բացակայում էին էլեկտրոնային թվային ստորագրությունները:
- **«Ռ Քոնսալթ» ՍՊ** ընկերության կողմից հայտով ներկայացված Հավելված 1-ում առկա էր անհամապատասխանություն և հայտում բացակայում էր ներկայացվող

փաստաթղթերը ստորագրելու լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը՝ համաձայն հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 2.7 ենթակետի:

- **«Սուար» ՍՊ** ընկերության կողմից ներկայացված հայտում մասնագիտական փորձառությունը հավաստող տեղեկատվությունը ներկայացված էր Հրավերի 1-ին մասի 2.4 կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին անհամապատասխան:

26. 05.2026 թվականին, ժամը 12:00–ին կայացած նիստում Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

4.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին ծանուցումը ստանալու օրվանից մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

5. Տեղեկություն՝ ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2026/19ՏՀ ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերում արձանագրված հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման մասին

5.1 Ընդունել ի գիտություն, որ բոլոր մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկվել են հայտերում առկա անհամապատասխանությունը:

29. 05.2026 թվականին, ժամը 15:00–ին կայացած նիստում Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

5.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետով, ստուգել «Սուար» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը:

5.3 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել իրավասու մարմնի կողմից գրավոր եզրակացությունը ստանալու օրվան հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 16:00-ին:

6. Տեղեկություն՝ ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2026/19ՏՀ ընթացակարգի շրջանակում մասնակցի կողմից ներկայացված հայտի իսկության վերաբերյալ

6.1 Սույն թվականի հունիսի 8-ին և հունիսի 11-ին պաշտոնական աղբյուրից ստացվել է տեղեկատվություն, ըստ որի «Սուար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

11. 06.2026 թվականին, ժամը 16:00–ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

7. Տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Չափաբաժին 1՝ Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի, Արա-1 և Արա-2 թաղամասերի փողոցների ասֆալտապատման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	**«Արխինէքս» ՍՊԸ**	**4 800 000**	**0**	**4 800 000**
2	«Սուար» ՍՊԸ	4 856 000	0	4 856 000
3	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	5 000 000	1 000 000	6 000 000
4	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	5 400 000	1 080 000	6 480 000
5	«ԲԵՍՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ	5 900 000	0	5 900 000
6	«Ռ Քոնսալթ» ՍՊԸ	6 500 000	1 300 000	7 800 000
7	«Սուֆետ» ՍՊԸ	10 825 000	2 165 000	12 990 000

7.2 Մասնակիցների հայտերի հաշվարկման ճշգրտությունը (տառերով, հայտում ներկայացված հայտերի համարներին արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկի թվաբանական ճշգրտությունը համապատասխանում են (ճիշտ են):

8. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2026/19ՏՀ ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

8.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ընտրված մասնակից ճանաչել **«Արխինէքս» ՍՊԸ**-ին:

8.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել **ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2026/19ՏՀ** ծածկագրով հրատապ բաց մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

8.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

8.4 Հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել **«Արխինէքս» ՍՊԸ** -ին:

9. Տեղեկատվություն՝ կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

9.1 Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

10. Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

10.1 Մասնակիցների կողմից հրավերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Նորիկ Մնոյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Գևորգ Խեչումյան**	.....
	Հրանտ Մինասյան	.....
	Նարեկ Հայրապետյան	.....
	Լաուրա Գևորգյան	.....
Քարտուղար՝	**Անի Բաղալյան**	.....